«Ճամփորդիր 50% քեշբեքով» Mastercard քարտերի արշավի մասնակցության պայմաններ

1. Ներածություն

1.1 Mastercard վճարային համակարգի Mastercard World և Mastercard World Elite քարտերի քարտապանների (այսուհետ՝ Քարտապան) համար «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից իրականացվում է արշավ (այսուհետ՝ Արշավ):

1.2 Արշավի կազմակերպիչ է հանդիսանում «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ):

1.3 Մասնակցելով Արշավին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.4 Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Քարտապանների համար իրականացվող Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է www.acba.am կայքում:

2.2 Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում (այսուհետ՝ Պայմաններ), որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Պայմանների 2.1 կետում նշված հարթակում:

2.3 Արշավի շրջանակում հետվճարները տրամադրվում են առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Կազմակերպիչը:

2.4 Արշավին մասնակցության համար որևէ վճար չի գանձվում:

2.5 Արշավի մասնակիցը հաստատվում է Կազմակերպչի կողմից՝ անհրաժեշտության դեպքում Քարտապանի նախատեսված տվյալների ստուգումից հետո: Կազմակերպիչն իրավունք ունի կապ հաստատել մասնակցի հետ և ստուգել նրա իսկությունը:

3. Մասնակցության պայմաններ

3.1 Արշավի մասնակցության նպատակով 2026 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 30-ը ներառյալ Քարտապանները պետք է.

- Բանկի կողմից թողարկված Mastercard World և Mastercard World Elite տեսակի քարտերով (այսուհետ՝ Քարտ) իրականացնեն վճարային գործառնություն (այսուհետ՝ Գործառնություն) անմիջապես արտասահմանյան միջազգային ավիաընկերությունների (ոչ հայկական) վաճառակետերում, պաշտոնական կայքերում և/կամ հավելվածներում:

3.2 Արշավի պայմաններին բավարարած յուրաքանչյուր հաճախորդի, անկախ Քարտերի քանակից, կտրամադրվի տվյալ Գործառնությունների հանրագումարի 50 տոկոսի չափով միանվագ հետվճար (cashback), առավելագույնը՝ 30 000 ՀՀ դրամ:

3.3 Գործառնությունների հաշվարկը կատարելու համար հիմք է ընդունվում Գործառնության կատարման ամսաթիվը: Որպես Գործառնության կատարման ամսաթիվ դիտարկվում է Քարտի քարտային հաշվի քաղվածքում տվյալ գործարքի կատարման ամսաթիվը:

3.4 Կից Քարտի Քարտապանները չեն կարող մասնակցել հիմնական Քարտից անկախ: Կից քարտերով կատարված Գործառնությունները գումարվում են հիմնական Քարտերով կատարված Գործառնություններին:

3.5 Արշավի ընթացքում հաշվարկվում է Քարտապանի բոլոր գործող Քարտերով կատարված Գործառնությունները:

3.6 Արշավի մասնակցի առնվազն մեկ Քարտը հետվճարի տրամադրման պահին պետք է լինի գործող:

3.7 Արշավի ընթացքում յուրաքանչյուր հաճախորդ կարող է ստանալ հետվճար միայն մեկ անգամ:

3.8 Հետվճարի գումարը կվճարվի Քարտի քարտային հաշվին մինչև 2026թ. դեկտեմբերի 30-ը ներառյալ:

3.9 Կազմակերպչի կողմից զեղծարար գործարքի վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու պարագայում Քարտապանի մասնակցությունը կարող է անվավեր ճանաչվել: Զեղծարար գործարքի չափանիշները սահմանվում և որոշվում են Կազմակերպչի կողմից:

3.10 Քարտապանի կողմից Արշավի շրջանակում հաշվարկված և սույն Պայմանների 3.1 կետում նշված պայմանի վրա ազդող Գործառնությունների հետվճարներ լինելու պարագայում Կազմակերպիչն իրավունք ունի չեղյալ համարել արշավին Քարտապանի մասնակցությունը:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել www.acba.am կայք կամ զանգահարել 010-31-88-88 հեռախոսահամարով:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: